ԱՐՄԱՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ամերիկաի համար տարեկան 4 տոլար Թղթդրմ.
Եւրոպաի և այլ տեղերի համար տրկն. 20 ֆրանգ
Տնօրէնութիւնն ինք կը վճարէ փոստի ծախքը։
Բաժնորդագրութիւնները կը սկսին ամսագլուխներէն (ըստ Ն. Տ.ի) և կանխիկ վճարելի են։ Վեցամսեայ և եռամսեայ բաժնորդագրութիւններ ալ կընդունուին, առանց ոևէ յաւելման բաժնէդ նին վրայ։
Նամակ և ծրար պէտք է ղրկել հետևեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia* MARSEILLE (France)

Գ ՏԱՐԻ ԹԻԻ 8
1887 ՍԵՊՏԵՄԲԵՐ 10
ՕԳՈՍՏՈՍ 29 (Հ. Տ.)
ԳԱՓԱՔ
Կը հրատարակուի Դ. և Շբթ. օրեր

ՊԱՏՄԱՆՆԵՐ
Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։
Պարտաւոր չէ վերադարձնել չհրատարակուած ձեռագիրները։
Ծանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։
Ծանուցման 1 միջակ գիրը 1 սանդիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանդիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues au bureau dela Rédaction (Rue Vacon, 50)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ամերիկաի դրութիւնը. — Պարսկաստանի Հայերն եւ իրենց գաղթական ճիւղեր ի Հնդկաստան եւայլն. — Նամակ Ենգիպտոսեն (Գահիրէ). — Անգլօ-թիւրք դաշնագրի մերժման մասին. — Հայեր ի Թիւրքիա. — Պուլկարիա. — Արտասահմանի լուրեր. — Ծանուցումներ։

«ԱՐՄԷՆԻԱ» Ի ԴՐՈՒԹԻՒՆԸ

Ամերիկաի Գ տարեշրջանի Ա թուոյն մենք խոստացած էինք մեր ընթերցողներուն տեղեկութիւն հաղորդել Արմենիաի նիւթական դրութեան և ընթացքի մասին ևս։ Ա յսօր կատարեալ մասամբ կատարել այդ։

Ուրիշ անգամ արդէն յայտնած ենք և ի հարկէ ծանօթ ալ կը լինի Ցրանսայի մէջ բնակած և ապագրական գործին հետաքրքիր եղած անձերին որ Արմենիան փոքր ի շատէ տպաւորիչ գրութեան մէջ պահպանելու համար 600 բաժնորդ ունենալ հարկ կը լինի։ Արդ, Արմենիան իւր երկտարեկան կեանքի մէջ չունեցաւ երբէք բաժնորդներուն այդ թիւ։ Նա մէկ ժամանակ մինչեւ 100 բաժնորդով ալ ձեռնած և չարունակած է առաջին տարուն մէջ այն միջոցներ երբ հետզհետէ Թիւրքիա և Ռուսիա մտնէին արդիլուելու իրեն։ Իսկ վերջացող երկրորդ տարուն մէջ բաժնորդներուն թիւը հասաւ մինչեւ 550ի, զանազան անձերէ և ընկերութիւններէ այս և այն կողմ նուէր ղրկուած թերթերուին հանդերձ։ Բայց բաժնորդներէն մէկ մաս տակաւին իններորդ ամսին մէջ իրենց տարեկան (ամենք ալ մինչեւ իսկ երկտարեկան) բաժնորդագիները վճարած չլինելով, մեր կրկին և կրկին ստած պղտարտութիւններուն հակառակ, և միւս կողմէ ծախքերն կանոնաւորապէս վճարել հարկ լինելով, մենք պարտաւորեցանք ապրիլ ամսի վերջ գադրեցնել ամեն անանց թերթերի ղրկուիլը որոնք դէմ եռամսեայ կանխիկ չեն վճարած և այսպէս ճշդութեամբ գործադրած լինել լրագրի բաժնորդագրի կանխիկ վճարման պայմանը։ Բայց այս կերպով 150ի չափ բաժնորդներ պակսեցան և հետևապէս, անցած տարու մէջ բաժնորդների ամենաբարձր թիւը իսկապէս հասած եղաւ 400ի։ Ա յդ 400է 31ին նուէր ղրկուած են հետևեալներէն։

Ռումանիայէն Պուքրէշի Հայրենասէր ընկերութիւնն վճարելով 120 ֆրանգ, նուիրած է 6 օրինակ Արմենիա Իպրահիլի Հայ եկեղեցւոյն, Կալացի Հայ հասարակութեան (Արամեան որճարանի միջոցով) և Սուլինաի Հայ հասարակութեան։ Պուքրէշէն 5 բաժնորդներ միանալով նուիրած են մէկ օր. Եաշի վարժարանին։ Բէօսթէնճէէն Մեծ. պ. Ճիպրայիլ Ֆրէնկեան նուիրած է 1 օր. Բէօսթէնճէի վարժարանին։ Բէօսթէնճէէն Մեծ. պրն. Յակոբ Թովմասեան նուիրած է 1 օր. Պարսկաստանի Արտազի Ս. Թադէոս Առաքեալ վանքին և 1 օր. Դալարամբի Ս. Սահականնոս վանքին։ Պիւկուրիւմէն Ռուսճուգի Ներսէսեան ընկերութիւնն նուիրած է 5 օր. Արմենիա Ռուսճուգի մէջ զանազան անձերի. Թօթրաքանէն Մեծ. Տ. Գրիգոր Թորոսեանց նուիրած է 1 օր. Բազարճըգի վարժարանին։ Սիլիստրիէն Մեծ. պրն. Ա. Մինասեան 1 օր. Պրայլաի Հայ վարժարանին։ Վառնայէն Մեծ. պ. Յ. Պաամճեան 1 օր. Եաշի վարժարանին։ ՄԱՆՉԻՍԹՐԻՆ Հայրենասէր մի Հայ 1 օր. Մարտպան (Պարսկաստան) Հայ հասարակութեան։ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԷՆ Դավրէժի երիտասարդ Հայ արհեստաւորներէ կազմուած մի ընկերութիւն նուիրած է 4 օր. զանազան տեղեր։ Բէյնաիր Աբասէն Մեծ. պրն. Մ. Քալանթարեանց 1 օր. Բաշտի Հայ Դպրոցին։ ԺԸՆԻՎԷն մի հայրենասէր Հայ 1 օր. Լէմպէրկի Հայ արքեպիսկոպոսարանին. ՄԱՐՍԻԼԻԷն մի հայրենասէր Հայ երիտասարդ 1 օր. Նուվլաի վարժարանին և 1 օր. եկեղեցւոյն։ ԱՄԵՐԻԿԱՅէն Նիւ Եորքէն Մեծ. պրն. Յովսէփ Սարաֆեան 1 օր. Թուլչաի (Ռումանիա) Հայ վարժարանին և Մեծ. պրն. Յովսէփ Պօղոսեան 1 օր. Պապատաղի (Ռումանիա) Հայ վարժարանին։ Խ. Գ. քաղաքէն (ՌՈՒՍԻԱ) մի հայրենասէր Հայ 1 օր. Սօֆիաի եկեղեցւոյն։ ՍՈՒՐԱԲԱՅԱՆ Մեծ. պրն. Յ. Մ. Մեսրոպեան 1 օր. Նոր Զուղայի Ս. Յովհաննէս եկեղեցւոյ քահանայներին։

Բ տարեշրջանին մէջ Արմենիաին եղած են հետևեալ նուիրատուութիւնները։ ԹԻՒՐԲԻԱՅէն Ս. քաղաքէն մի հայէ 200 ֆր. Գ. քաղաքէն հանգանակուած 75 ֆր. 40 մեմ. Կ. Զ. քաղաքէն հանգանակուած 40. Յովհաննէսեան քաղաքներէն մի քանի հայեր կամէ 20. Մի վարժարանի ուսանողներէն 6,80. Դ. քաղաքէն մի հայ 4. ամբողջ գումարն ֆր. 346,20
ՌՈՒՍԻԱՅի մի քաղաքէն 97,20
ՊԱՐՍԿԱՍՏԱՆէն Բաշտի հայ ընթերցարանէն 11 ֆր., Դավրէժէն Գ. Մարտիրոս Ս. զամալեանցէ 8,80 և Գ. Բարսղեան Պէճանեանէ 2,20. Մի հայէ 2, 20. ամբողջն 24,20
ՌՈՒՄԱՆԻԱՅէն Ֆօքշանի «Արմէնիա» ընկերութենէն 250 ֆր., Թուլչաի Սրժ. Սրխատակէս վարդապետէն 10. 260,
ՊՈՒԼԿԱՐԻԱՅէն Սիլիստրիէի Հայրենասէր ընկերութենէն 100 ֆ., Բուճուգէն Գ. Սահակեան փափազեանէ 8 ֆր. 108,
ԵԳԻՊՏՈՍԷն Հէհէտէն Պրն. Դրիգոր Թարազճեանէ (2 թերթի բաժնորդագրութիւնէ զատ նուիրած է նաեւ) 60 ֆ.
Ալէքսանդրիայէն Պրն. Դրիգոր Կիւտիւքեանէ 20. Գահիրէէն Պրն. Գ. Կ. 20 ֆր. Գահիրէ-աբնակ պանդուխտ վանցի ազգայիններէն 20ֆ. ամբողջն 120,
ՋԱՒԱՅԷն Բաստւխի Հայոց Ճանճանճանոց ժողովէն 208 ֆր. ՀՆԴԿԱՍՏԱՆի Բոմբայ քաղաքի Սրժ. Տ. Յովհաննէս քահանայ Մարկոսեանէ 14,95 222,95
ՀՈՒՆԴԱՐԻԱՅէն Սուչաւաի Ա. Նի ընկերութենէն 60,
ԱՄԵՐԻԿԱՅէն Նիւ Եորքէն Գ. Գ. Թովմաս Զուլճեանէ և Թովմաս Թիւթիւնճեանէ 27 ֆր. և Գ. Արամ Սարաֆեանէ 20 ֆր. Պօսթընէն Գ. Խաչիկ Դըբիդրեանէ 5 ֆր. 52,
ՓԱՐԻԶէն մի քանի հայ երիտասարդներէ 30,
ՄՈՆՊԼԻԷի հայ ուսանողական ակումբէն 10,

Ուրեմն Բ տարեշրջանին մէջ Արմենիաի եղած նուիրատուութեան գումարն կանէը ֆր. 1330,55
որ ասել է գրեթէ 67 բաժնորդագին։ ՄԱՐՍԷԻԼի Պատ. Հայ գաղթականութիւնը նկատի առնելով Արմենիաի այս անհրաժեշտ գրութիւն, իւր մէջ մի հանգանակութիւն անելով նուիրեց 550 ֆր., նոյնպէս Մարսէյլի Հայկական ակումբն ալ նուիրեց 380 ֆր. ամբողջն 930 ֆր. Մարսէյլէն որ ասել է գրեթէ 47 բաժնորդագին։ Սոյն գումար աւելցունելով նախորդ 67ին վրայ, ամբողջն 114 բաժնորդագնի փոխարէն կը լինին եղած նուիրատուութիւնները որոնք երթէ աւելցունենք մեր բաժնորդների 400 թուին վրայ, մենք ունեցած կը լինինք այս 2 տարու մէջ, բաժնորդների ամենաբարձր թիւն հասած ժամանակամիջոցին մէջ, 514 բաժնորդ գրեթէ, մէկ գիտենք որ Արմենիան կարդացողներն հազարաւոր Հայեր են եղած։

Ա յժմ Արմենիան իւր Գ տարեշրջանի սկիզբը ունեցած է 276 բաժնորդ հետեւեալ տեղերն. Պուլկարիա 58 բաժնորդ, Ռումանիա 46, Եգիպտոս, 45, Ցրանսա 32, Ամերիկա 26, Պարսկաստան 17, Անգլիա 13, Հնդկաստան և Բելճիական 11, Զաւա 7, Ասորիա և Հունգարիա 6, Գերմանիա 2, Իտալիա 2, Կիպրոս 2, Յունաստան 2, Պելճիքա 2, Զուիցերիա 1, Հոլանտա 1, Մալթա 1, Զէյլանեան կղզիներ 1, Սերպիա 1։

Զնայելով բաժնորդների այս խիտ նուազ թուի, մենք որոշեցինք չարունակել Արմենիան այս Գ տարի եւս առանց փոխելու իւր ազատական ուղղութիւն։ Սակայն մեր կարծութենէ չատ վեր է անշուշտ 3 տարի ձեռնհասելով հրատարակել մի ազատական հայ լրագիր Եւրոպաի մէջ և մեր յոյս դրած ենք ամեն կողմ ցիր և ցան գտնուող այն սակաւաթիւ բայց ընտրեալ մեր հայրենակիցների վրայ որոնք լաւ ըմբռնելով Արմենիաի խմբագրութեան ոգին հաճակրած են անոր և կուզեն պահպանել մի ազատական հայ թերթ Եւրոպաի մէջ։

Բիչերն ալ կրնան մեծ գործ կատարել, եթէ դանէ այդ քիչերը աշխատակցին և օգնեն իրար։ Մ. Փ.

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐՆ ԵՒ ԻՐԵՆՑ ԳԱՂԹԱԿԱՆ ՃԻՒՂԵՐ Ի ՀՆԴԿԱՍՏԱՆ ԵՒԼՆ.

Բաստւխա (Ճաւա)
ի 17 յուլիս 1887 Ն. Տ.

Արմենիաի 64 և 65 թուերուն կարդացինք երկարատառութ քաղուած մի «Մանկավարժանոց» լրագրի էջերէն Բիւրմանիոյ և Հնդկաստանի

Հայերի նկատմամբ, և շատ ցաւեցինք։ Անշուշտ ծանրակշիռ խնդիր մը է սա ազգայնոց դրութիւնը, սակայն գլխի մասնաւոր տեղեկութիւններէն զուրկ լինելով՝ գլխաւորապէս կը թերանայ պարզ ու ճշմարիտ նկարագրել։

Թէպէտ ժամանակ չներէ մեզ երկարօրէն ու մանրամասնաբար առնչի ձեր պատ. ընթերցողներին առնել սոյն ցաւալի խնդիրն, արդէ անշուշտ և թշուառ դրութեան ազգայնոց մեր թէ՛ ի Պարսս և թէ՛ ի Հնդիկս, սակայն յետագային յուսամ թարգմանաբար քաղեալ ի մեր անցեալ տարւոյ ճանապարհորդութեան Անդրիներէն լեզուաւ օրագրին՝ կմատուցանեմք միջոցաւ ձեր պատուական էջերուն, ի տեղեկութիւն հեռաւոր ազգասէրոց, յուսալով դի Գերապատիւ խմբագրութիւն «Մանկավարժանոց»ի կը բարեհաճի կրկին ի լոյս ածել միջոցաւ իւր պատուական էջերուն ի տեղեկութիւն բանասիրաց։

Հնդկաստանի և Բիւրմանիոյ Հայերն դաղթած են գլխաւորապէս ի Նոր Ջուղայէ Պարսկաստանէն, որք նչանաւոր են իւրեանց Ամենափրկիչ վանքովն. այժմեան առաջնորդ վանահայրն է Գրիգորիս Հայրիկը, որոյ ժամանակն ցաւալի ու աննչան տեղ մը կը գրաւի Ջուղայու անմահ արձանագրութեան մէջն, և մի տխուր ու թշուառ պատկերը կը ներկայացնէ ազգագիրց։

Պարսկահայերն երկու գլխաւոր ժողովք կրաժանուին, մինն՝ Ազգապատուականի առաջնորդութեան ներքոյ և միւսն Ամենափրկչեան վանայ. վերջինքս կը պատուին Պարսկաստանայ գլխաւոր քաղաքներուն՝ մանաւանդ Թէհրանում ու Ասպահանում (Նոր Ջուղա)։ ընդհանրապէս խօսելով, կը ծառայեն առեւտրութեան գործոյ, և իւրեանց ժիր՝ աչալուրջ ու անգադար աշխատութիւններով, յաջող վիճակում կը պանուին թէ՛ եւ շատոնք նախանձելի իսկ։

Նոր Ջուղայուն մօտ՝ ութն գաւառներում, բաղկացած 72 գիւղերէից, կրնակուին իբր 2570 տուն գիւղական պարսկահայերը, որք թէպէտ անցեալ ասկալի թանգութենէն խիստ հարուած մը կրելով նուազած են, սակայն իւրեանց աչալրջութեամբ և անդուլ աշխատութեամբն տակաւին նիւթապէս ապէկ վիճակում կհամարուին։

Համադան քաղաքում՝ թէպէտ սպառած են լուսաւորչակրօն Հայ դերդաստանները, սակայն իւր կից Շաւարին անուամբ գիւղում՝ նչանաւոր դերք մը կկազմեն իբր 100 տուն բողոքական Հայ բնակիչներ, որք ըստ տեղական հանգամանաց միխիթար վիճակում կհամարուին։

Պարսկահայերի բովանդակ թիւը՝ հեռուեալ համառօտ՝ ասկայն ուղիղ ցանկէն տեղեկանալ կհրաւիրեմք ծարտելի ընթերցողները։

Քաղաքներուն կամ Գաւառներուն անուններ	Թաղի կամ Գիւղի թիւը	Թիւը Տանց	Թիւը Արուաց	Թիւը Իգաց	Գումար
Նոր Ջուղա (Ասպահան)	8 թաղեր	410	1200	1575	2775
Թէհրան	2 »	110	205	148	353
Թէհրանայ (գիւղեր)	3 գիւղեր	55	150	125	275
Ռաշտ	1 թաղ	10	70	10	80
Համադան	1 »				
» Գիւղ Շաւարին	գիւղ	80	185	160	345
Շիրազ	1 թաղ	5	14	25	39
Բուշեհր	2 թաղեր	10	20	28	48
Գաւառք. —Բուրլաւ	9 գիւղեր	260	600	800	1400
Քեաշարու	5 »	120	350	400	750
Գեաւիլու	16 »	400	1150	1350	2500
Քեազազ	9 »	180	500	600	1100
Ղարաղան	4 »	100	300	350	650
Մալայիր	3 »	90	290	210	500
Զարմահալ	5 »	320	1010	1390	2400
Փէրիա	21 »	1100	3500	400	7500
6 Քաղաքներ	15 Թաղեր	3252	9550	11182	20732
10 Գաւառներ	75 Գիւղեր				

Վերոյին ցանկը ցոյց կուտայ Պարսկաստանի Հայ բնակիչներուն բովանդակ թիւը (թողեալ Աստրապատականի մասինն) և կհամարուին իբր թէ ի ներքոյ հոգեւոր կառավարութեան Ամենափրկչեան վանայ։ Մենք սոյն չընչագրութիւնն ընձեռնած լինելով հաւատարիմ աղբիւրներից մինչդեռ Պարսկաստանում անձամբ կղկղագայելնք, անչուշտ և ուղղութեանն կարող կը լինեմք երաշխաւորել։

Պարսկահայերն երկու խիստ ու անողորմ տանջանաց ներքոյ չարաչար կտքնին, մինն տեղական կառավարութեան և միւսն հոգեւորականաց. հետեւապէս սկսեալ ի 1606 թուականէն, այն ինչ հաստատեցան նոքա Պարսկաստանում, մինչ ցարդ ոչինչ մի նշանաւոր յառաջդիմութիւն չեն ունեցած, թողեալ այն՝ ինչ որ ժամանակն ինքնին ներմուծեց։

Հայկական սրամիտ ու աչալուրջ յատկութիւններին հաւատարիմ մնացած են, իւրեանց հզօր միտքն ամեն բանի կարող կձեւանայ և ամեն ժամամբ կը գերազանցեն տեղական բնակիչներին, սակայն բռնակալ կառավարութեան ներքոյ չարունակ ճնշուած լինելով կորուսած են թէ՛ իւրեանց ազատութեան ճաշակն և թէ՛ ճշմարիտ կարեկցութեան ոգին։

Կրօնական մասին չատ բարեպաշտ և ջերմեռանդ մնացած են, այն ինչ տակաւին մերձ տասն և չորս եկեղեցիներ կանգուն կչարունակեն Նոր Ջուղայումն միայն՝ ուր հայ լուսաւորչականներ, հռովմէական կաթոլիկներ և բողոքականներ անվրդով միօք կը պատարագեն աղօթից։

Բողոքականութիւնն թէեւ սկսած է Գրիգորիսի օրովն և տակաւին իւր մանկութեան մէջ կգտնուի, սակայն նչանաւոր է իւր արագ և հաստատուն գործունէութիւնով, և իւր համբաւեալ երկսեռ ու եռալեզու դպրոցովն, ուր անց քան 400 երկսեռ ուսանողներ՝ յաջողապէս կհրահանգին։

Նախնի Ջուղայեցիք երեւի դէպ. բոցայ մասին չատ փոքր հոգայողութիւն ստած լինեն՝ վասն զի հին արձանագրութիւններ այս մասին յատկապէս կանգնած են, մանաւանդ զի և չկան շէնքեր ու աւերակներ տակոյ մէջ հաւատոյ տեղեկութիւններ։ Ջուղայեցիք գրաճանութեամբ անցեալ 50 տարուան մեծ յառաջադիմութեան քայլերը արձակած են, սակայն լուսաւորչակրօն հայերն, տակաւին նահապետական ընթացից մէջ կշարունակեն։ Ամենափրկչեան վանայ Առաջնորդն Գրիգորիսը՝ ինքնին եւս կմնայ նոյն հին և ասիական գաղափարի ներքոյ տպաւորեալ, ուստի և յառաջադէմ դպրոցներ չէ՛ սիրել, վասն զի ի սոյն հաստատութենէ անչուշտ լուսաւորեալ երիտասարդութիւն յառաջ կուգայ և հետեւաբար իւր բռնակալ իշխանութեանն խոչընդոտ կլինի։

Կան տասնի չափ բարեգործական հաստատութիւններ Նոր Ջուղայումն, որ գլխովին անխնամ վիճակում կը ձգուին չնորհիւ նոյն իսկ Գրիգորիսի։ Սոյն հաստատութիւնների սկզբնապատճառն եղած է գլխաւորապէս Հոգելոյս և Երջանկայիշատակ Տ. Թադէոս Արքեպիսկոպոսն, որ յամի Տեառն 1850—963 մեռ երկօք առաջնորդ եւկաց Վանայն Ամենափրկչի, սակայն իւր անարժան յաջորդայ օրերովն միանգամայն անչքացուալ և դանդաղեալ վիճակում կմնան, որ և խիստ ցաւ և սուգ կպատճառեն ճշմարիտ ազգասէրների։

Անշուշտ Հայրենեաց առթով մեր անբժշկելի վերքերն, պիտի նորոգուին ի նորոյ, եթէ մանրամասնաբար արձանագրելու լինէինք տատ, այժմեան դառն և ծանրակշիռ խնդիր Պարսկահայոց, սակայն ցաւ ի սիրտ և դրեթէ ակամայ պարտաւորութեամբ թոյլ տուինք վերոյին համառօտութեանն նամբ՝ առ նպատակաւ գուցէ հասանիցէ առ այն անմատչելի գաւառն ուր հնդհատան ամօք յառաջ և այսր՝ Ջուղայեցւոց և Հնդկահայոց քանի մի նչանաւոր բողոքն ու աղօթքն անտես ձգուած են։

Զկամելով Ձեր պատուական էջերն Ջուղայեցւոց և Պարսկահայոց ցաւալի խնդրոյն զբաղել երկարօրէն, որ ըստ ամենայնի համակիչս կգտնուին Վանայհայերին, մանաւանդ և վարձով գիտեմք դի թողեալ զրդռելոյ Գրիգորիսի բարկութիւնն, չունի այլեւս արգիլնս կամ գէթ աղքատին էջմիածնի, ուստի կմօտեմք ու կլռեմք մինչեւ անցցէ բարկութիւն Տեառն։ Ջուղայեցւոց անմռունչ բողոքն ու աղօթքն պիտի ձգան արձանագրեալ իրր քարոզ յիշատակի քաջ հովուութեան Հանդուցեալ Տէր Գէորգ և ներկայ Տէր Մակար կաթուղիկոսների։

(Շարունակելի)

ՆԱՄԱԿ ԵԳԻՊՏՈՍԷՆ

(Շար. 7րդ թիւոյն եւ վերջ)

Պ. Քննադատն հետաքրքիր է իմանալ թէ Բարեգործական ընկերութեան նուիրած 150 ոսկւով ի՞նչ բանակարգութիւնք կատարուած են Թոքիհանն վարժարանի մէջ։ Պ. Զարմայը այդ նուէրն ի՞նչ բանի յատկացեալ լինելն կրնայ նոյն իսկ Տեղեկագրէն իմանալ, եթէ հաճի աչի ուշով կարդալ զայն։

Պ. Զարմայը կըսէ. «Քնաւ չկրցանք գիտնալ թէ ա՛յք են ժառանգական կամ մասնաւոր խնդիրք, որք մասամբ լուծուած են։» Այդ խնդիրներն իրենց մասնաւոր հանգամանացն համար ի Տեղեկագրին մանրամասնօրէն բացատրելու հարկ չկար. միայն թէ պ. Զարմայը ապահով պէտք է լինի թէ ժառանգական կնճռոտ խնդիրք եթէ կարի յոյժ չդրաղեցնէին զԳեր. Առաջնորդն և զՊատ. Քար. Ժողովն, մատուցեալ Տեղեկագիրն աւելի ճոխ պիտի լինէր անտարակոյս։

Պ. Զարմայը կըսէ. «Մէկ հատիկ քարոզ մը խօսած է Գեր. Իզմիրլեան իւր ամբողջ պաշտօնավարութեան միջոցին մէջ»։ Պ. Զարմայրի այս խօսքէն սա կը հասկցուի բացորոշապէս թէ ինք այդ չրջանի մէջ միայն մէկ անգամ եկեղեցի գնացած է, ապա թէ ոչ ամեն անգամ որ եկեղեցի յաճախելու պարտականութիւնն յարգած են, ատեն ունկնդրած են Ն. Սրբազնութիւնն Գերեզմանի բարոյալից և հայրենասիրական քարոզներուն։

Պ. Զարմայը կըսէ. «Գեր. Իզմիրլեան չէ՞ր կրնար ազգային դաստիարակութեան խնդիրն ի նկատի առնել և արգելուլ այն օտարամոլութեան հոսանքն, որ Հայ մանկութիւնն օր ըստ օրէ ազգին ծոցէն կանջատէ։» Գահիրէի Խորէնեան վարժարանի երկսեռ աշակերտաց համար, շաբաթներով թուղթ մեզան և ամիսներով դասագիրք կը պահանջեն. պաշտօնեայք 3–4 և երբեմն 6–7 ամսական պահանջ կունենային վարժարանի մնաւորէն, ինչպես չատ անգամ ցաւով տեղեկացած է նախորդ Ուսումնական խորհուրդն։ Սակայն Ն. Սրբազնութիւնը յեգիպտոս ժամանելուն պէս փութացած է բարդում մ'ընել տալու Ազգ. Գաւառական մնաւորէն վարժարանի յատկացեալ դումարին վրայ, որ ամեն ամիս վճարուած է կանոնաւորապէս, գասագիրք և այլ պիտոյք իբրենց ժամանակին կը հայթայթուին. պաշտօնեայք իւրաքանչիւր ամսոյ ըստման կ'առանան իրենց թոշակներն, և վարժարանի երկսեռ սանուց թիւն խիստ զգալի կերպիւ աւելցած է։ Ն. Սրբազնութիւնն եկեղեցւոյ բեմէն եւս յաճախ բացատրած է ազգային դաստիարակութեան աւագ կարեւորութիւնն։ Այդ բացայայտ կերեւի թէ Նորին Սրբազնութեան միտքայ պաշտօնավարութեան չրջանին մէջ միջոցներուն ներածին չափ վարժարանն բարեկարգուած է։

Պ. Զարմայը կըսէ. «Գեր. Իզմիրլեան չէ՞ր կրնար կուսակցական ոգին

արմատախիլ ընել։» այս ոգին ան-
ծանօթ է մեզ յեգիպտոս։

Եթէ պ. Զարմայը «կուսակցու-
թիւն» ըսելով ինքզինքը և եթէ կը
դանուին, մեկ երկու իրեն համախոհ-
ներ կուզէ հասկցնել, հարկ կղզամբ
լինցնել իրեն թէ ոչ մի երկրի ու ժա-
մանակի մէջ կարելի չէ որ հանրային
պաշտօն վարող անձ մը բնաւ հակա-
ւակորդ չունենայ։

Մեր սոյն հերքմանագրոյն վերջ
տալէ յառաջ՝ արժան կը համարիմք
դիտել տալու թէ պ. Զարմայը թէեւ
իր քննադատական յօդուածին մեկ
ծայրէն միւսն չանացած է Ն. Սրբազ-
նութեան բարձր արժանիքն ուրանալ
և բազմարդիւն գործունէութեան վը-
րայ ստուեր ածել, սակայն ըրած է
այնպիսի յայտարարութիւններ՝ որք
ընդհակառակն հաստատած են։

Պ. Զարմայը կը խոստովանի թէ
«Ըստ բազմաց Գեր. Իզմիրլեան մեր
կղերականներու անուանց համաստե-
ղութեան չորշորան աստղերէն մին է։»

Շատ ճշմարիտ է. բնականաբար
աւելի տրամաբանական է ընդունիլ
թէ բազումք իրաւացի են և ոչ թէ
պ. Զարմայը. Զայն բազմաց՝ ձայն
Աստուծոյ։

Հետեւեալ հակաւական խօսքերն
եւս, պ. Զարմայրի քննադատութեան
արժանիքն աստիճան մ'եւս կաւել-
ցընեն.

«Զենք սխալիր եթէ ըսենք թէ
սոյն Տեղեկագիրն Գեր. Իզմիրլեանի
ի գործ դրած բարեպմանց յիշատակու-
թենէն աւելի . . . ևն. ։

. . . «Կարելի եղած չէ նշմարել
Գեր. Իզմիրլեանի ոչ միայն գործունէ-
ութեան կամ հանճարոյն նմոյշը այլ և
շունչը կամ ստեղծը։»

Ա յլուր. «Վերջապէս Գեր. Իզմիր-
լեան իւր սոյն Տեղեկագրով չէ կրցած
օրինակելի գործունէութեան մը գէթ
դոյզն ապացոյց մը տալ. »

«Սոյն տեղեկագիրն . . . վաւհմ.
Թագուոր փաշայի ըրած մեծագործու-
թեանց մասին գեղեցիկ ներբողներ կը
պարունակէ, ներբողներ որոց որչափ
իրաւացի ըլլալն քննելու համար պէտք
է ծայրագոյն անձնուրացմ մ'ըլլալ . . .»

Հակաւութիւն հակաւութեանց.
Պ. Զարմայը կընդունի թէ վաւհմ. Թագ-
ուոր փաշայի ըրած մեծագործութիւնները ը-
րած է. սակայն այս առթիւ անոր
տրուած ներբողներն աճիպաւ հռչա-
կելով չհաճիր ընդունիլ։

Կը վերջացնեմք մեր յօդուածն սա
խորհրդածութեամբ թէ մինչ մեկ կող-
մանէ անձնուրաց և արժանաւոր հո-
վիւներու սուր կողբամք, միւս կողմէ
եղնել բարերար ձեռքերը վիրաւորել,
յողնաշատակ ճակատներու փշէ պըս-
ակ դնել, եկեղեցւոյ և ազգութեան
այդ քաջարիմ պահնորդներն թու-
քով և մուրով վարձատրել հակաւու-
թեանց ամենէն վատնգաւորն է, որ
ազգն կատաղեցնէ բարոյական
քայքայման. այս ալ անշուշտ ոչ ճըշ-
մարիտ ազգասիրութեան և ոչ ալ
արդար խղճի գործ է։ ՏԻԳՐԱՆ

3/15 օգոստ. 1887, Գահիրէ

ԱՆԳԼՕ-ԹԻՒՐՔ ԴԱՇՆԱԳՐԻ ՄԵՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Կ. Պօլսէն Journal de Genèveի ուղ-
ղուած մի թղթակցութեան մէջ կը կար-
դանք եգիպտական անգլօ-թիւրք դաշ-
նագրի մերժման մասին հետեւեալ հետա-
քրքրական տեղեկութիւններն որոնք մին-
չեւ այժմ այսչափ մանրամասնօրէն հրա-
տարակուած չլինելով ուրիշ տեղ, ա-
ւելորդ չենք համարիր հրատարակել Արմե-
մենիայի մէջ։

«Անցած յուլիս 13ին, որ չորեքշաբ-
թի օր էր, Սըր Հ. Տրըմմընտ Վօլֆ, ճա-
նապարհի պատրաստութիւններն կըտես-
նէր Թէրապիա իւր պանդոկի մէջ և իւր
հաստատ մտադրութիւն իմացուցած էր
հետեւեալ օր մեկնելու. «Իմօժէն» չոգէ-
նաւով որի արդէն սկսած էին կրակ տալ
վառարանին։ Երեկոյեան դէմ այցելու-
թեան եկաւ Արտաքին գործերի նախա-
րարութեան Խորհրդական Տատեան Ցա-
րութիւն էֆէնտին որ սկիզբն ի վեր
մասնաւոր հոգածութիւն ցոյց կուտար
դաշնագրի յաջողութեանը։ Արթին է-
ֆէնտին որ Սուլթանի մտերիմներէ մին
կը համարուի իրաւամբ, ասաւ սըր Հէն-
րիին։ «Նորին Վեհափառութեան կողմէն
կուգամ հրաւիրել ձեզ որ ձեր ճանապ
հընելը յետաձգէք մինչեւ չարաթ օր. կըր-
նամ ձեզ պատուաւոր խոստում տալ որ
վաղը չէ միւս օր, ուրբաթ, Սկլամլըքի
արարողութենէն յետոյ դաշնագիրը պի-
տի վաւերացուի և հետեւեալ օր կրնաք
Լոնտոն մեկնիլ դաշնագիրը հետերնիդ
առնելով։»

Սըր Հէնրի համոզուեցաւ վերջապէս
և խոստացաւ սպասել մինչեւ չարաթ օր։
Արթին էֆէնտին ալ վերադարձաւ Եըլ-
տըզ Քէօշկի պալատը իւր պաշտօնի կա-
տարման մասին տեղեկութիւն տալու
համար։ Երկու ժամ վերջ, ուրիշներն ալ
իմացած էին մի այդպիսի գաղտնի պաշ-
տօն կատարուած լինելն. Սուլթանին չըր-
ջապատող պաշտօնատարներէ մին ամէն
բան իմացուցած էր Պ. Նէլիտոֆին որ
նոյնպէս իր կողմէ վուխտացած էր տեղե-
կութիւն տալ իւր Փրանսացի պաշտօ-
նակցի, Պ. ոը Մօնթէպէլլօին։ Այդ եր-
կու դեսպաններ անմիջապէս հրահանգ
խնդրեցին իրենց կառավարութիւններէ
և համաձայնուեցան որ համիտեան մի դի-
մում անեն Բ.Դրան։ Հետեւեալ օր, հինգ-
չաբթի, կէս օրէն յետոյ ժամ 4ի առեն-
ներ, ռուսական դեսպանատան առաջին
թարգման Պ. Իվանովի եկաւ Եըլտըզ Քէօշ-
կի պալատը և ուղեց տեսնուիլ Սուլթա-
նի առաջին քարտուղարին հետ որին ա-
սաւ հետեւեալը. «Մենք իմացած ենք
Արթին էֆէնտու ունեցած տեսակցու-
թիւնը սըր Հէնրի Տրըմմընտ Վօլֆի հետ։
Բարեհաճեցէք ասել Նորին Վեհափառու-
թեան թէ այն օր որ Զարի կառավարու-
թիւնն կիմանայ թէ դաշնագիրն ստորա-
գրուած է, կայսերական զօրքերն պիտի
անցնին սահմանագլխէն և պիտի քալեն
երզրումի վրայ։»

Մի քանի վայրկեան յետոյ, կարգը
եկաւ Փրանսական դեսպանատան առա-
ջին թարգման Պ. Րոպէրին որ ներս մըտ-
նելով հետեւեալը խօսեցաւ. «Աֆ'ք Ն.
Վեհափառութեան որ եթէ իւր կողմէ
Արթին էֆէնտու արած խոստումը սըր
Հէնրի Տրըմմընտ Վօլֆին իրազեկութիւն
դառնայ, եթէ դաշնագիրն ստորագրուի,
նոյն օր Միջերկրականի Փրանսական նա-
ւատորմիղը խարիսխ պիտի նետէ Պէյ-
րութի առջեւ և Փրանսան այնուհետեւ
իր սեփական շահերը պաշտպանելու մի-
այն հոգ պիտի տանի։»

Կրնաք դուշակել թէ այդ կրկին յայ-
տարարութիւնները ինչ արդիւնք ունե-
ցան։ Սուլթանը չվարանեցաւ այլեւս և
վարանելիք ալ չէր մնացած։ Եթէ մեր-
ժէր դաշնագիրն ստորագրել, հետե-
ւանքն պիտի լինէր միայն երկարաձգել
արդի վիճակն Եգիպտոսի մէջ։ Բայց եթէ
ստորագրէր դաշնագիրն, այդ պիտի լի-
նէր առաջին նշանը տալ Օսմանեան կայս-
րութեան մաս մաս բաժանմանը։ Ահա
ասոր համար էր որ սըր Հէնրի ի զուր կը
սպասէր ուրբաթ օր կէսօրէն յետոյ Տատ-
եան Արթին էֆէնտու խոստման իրա-
գործուելուն։ Շաբաթ երեկոյ, սըր Հէն-
րիի մեկնելէն մի քանի ժամ յառաջ, իւր
քարտուղար Պ. Քարթվրայթ իմացուց
իրեն թէ Արթին էֆէնտի եկած է և կու-
զէ տեսնուիլ։ Ի՞նչ անել եկած է, հար-
ցուց սըր Հէնրի տխուր և նեղացած ձայ-
նով. անտարակոյս եկած է յետ առնել
իւր պատուաւոր խոստում. դէչ չանէր,
միայն թէ ասէք իրեն ներս մտնելէ յա-
ռաջ որ ճամպարանքի մէջ եմ։ Տեսակ-
ցութիւնն կարճ եղաւ և ցուրտ և մի այդ-
պիսի նշանաւոր վախճան ունեցաւ այդ
դիւանագիտական կռիւ։»

ՀԱՑԵՐ Ի ԹԻՒՐՔԻՍ

Կիլիկիայէն օգոստ. 16/28ին մեզ
գրուած մի նամակէ կը քաղենք հե-
տեւեալն։

«Մինչեւ այժմ հարկաւ լսած ըլ-
լալու էք ցաւ ի սիրտ թէ Զէյթունն
հրոյ ճարակ եղած է. պատճառը
յայտնի է և շատ պարզ. ասիկա
թիւրք կառավարութեան բռնած
քաղաքականութեան մի նորաձեւու-
թիւնն է, այրել այն գիւղեր, քա-
ղաքներ ուր հայութիւն կայ իրօք։
Զէյթունցիք շատ ստրատիկլի թըշ-
ուառ վիճակի ենթարկուեցան։ Բո-
զոքականաց միսիոնարներն Ամերիկա
հեռագիր տուած են որ օգնութիւն-
ներ հասնին, մինչդեռ սպրին Կիլի-
կիոյ Մկրտիչ կաթողիկոս և Ն. Գալի
Բարութիւն Պատրիարք անուանեալ
անձերն անտարբեր մնացած են դեռ
հանգանակութիւն մը բանալու ի նը-
պաստ թշուառ Զէյթունցւոց . . . ։»

— Կ. Պօլսէն Տփղիսի «Մշակ»ին
դրուած օգոստ. 3/15 առաքիւ մի
նամակի մէջ կը կարդանք հետեւեալ
տխուր լուրն որ վերապահութեամբ
կը հրատարակենք։ «Գապիկ իշխանը
մեռաւ կըսեն։ Անշուշտ կը յիշէք 1878ի
դիւցազներգին որ իւր քաջերու գը-
լուխն անցած կը պատերազմէր և կը
յաղթանակէր։ Զէյթուն կալլի, Գա-
պիկ դեռ չա՛տ երիտասարդ կը մեռ-
նի։ Մահը բնական չէ կըսեն, սճրա-
գործի ձեռք մը կայ։ — Ինչ՞ւ թէ
սխալ լինէր այդ մահու լուրն. Հա-
յութեան ամենէն գառն հարուածնե-
րէ մին պիտի լինի։»

— Զէյթունէ գրուած մի վերջին
նամակի նայելով, հրդեհը ծագեր է
գատարանի գրագիրը մի թիւրքի տու-
նէն որի յայտարարութեան համեմատ,
դիչերը վառած քարիւղը թափելով
յարդանոցը կրակ առեր բռնկեր է և
ինքն ալ սպիսուեր է դոյքերն առ-
նելով փախչիլ։

— Կ. Պօլսի լրագիրներէն մէկ կը
կարդանք ցաւ ի սիրտ որ Մեծ. Պրն.
Ռուբէն Կիւմիւշկերտանեան կընքեր է
իւր մահկանացու ընթացք 55 տարե-
կան հասակին մէջ։ Մի քանի տարի
յառաջ մի թիւրք զինուորական վա-
ղոցէն ձիարշաւ գնացած ժամանակ
գետին տապալած էր Մեծ. պ. Կիւ-
լիւկերտանեանը որ բաւական մեծ
վտանգ անցուցած եղաւ, հազիւ ա-
ղաղելով մահէ բժիշկների չնորհիւ։
Ա յլ սակայն այդ հիւանդութիւն իւր
հետքեր թողած էր որոնք երբեմն
երեւան կուգային։ Այս անգամ ատամ-
կապէս երեսան եկնելով վերջ առած
է մի աղնուասիրտ և ազգասէր հայի
կեանքին որի վրայ ամենքն ալ դո-
վեստով միայն կը խօսին։ Բուղարիա-
ւորութիւնը կատարուած է փառա-
ւորապէս, ի այդպիսի անձի արժա-
նավայել յարդանքով։

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Վիէննայէն կըհեռագրեն թէ Ֆեր-
տինանտ իշխանը այժմ Պուլկարիոյ
կառավարութիւնը հաստատած լինե-
լով, մտադիր է երթալ իւր վաքսի
հողերը Հունգարիա, հոն սպասելու
համար որ Թուրքը և պետութիւննե-
րը վաւերացնեն իւր ընտրութիւն։
Իշխանի քարտուղարն արդէն մեկնած
է եղեր վաքս երթալու և Օսման
Ֆքրբէսի երկու չոգեկառքեր պահ-
ուած են իշխանին համար։ Ոմանք
աւելի հեռուն կերթան և կըխօսին մի
տեսակ հրաժարման վրայ։

— Վիէննայէն «Թայմզ»ին դրուած
մի հեռագիր պղծական կը համարի
«Նօրա Տայչէ» լրագրի ամբաստանու-
թիւնը թէ Բօպուրկի իշխանը Օրլէա-
նեսեանների մի հնարագիտութեան գոր-
ծիքն է։ Նա կը հաստատէ թէ Իշ-
խանի վարմունք ուղիղ է և թէ Պեր-
լինի դաշնագիրը չարգիլեր ընտրուած
Իշխանին Պուլկարիա երթալու մինչեւ
որ պետութիւններ վաւերացունեն
իւր ընտրութիւն։

— «Սէթանտարտ» լրագրին տրուած
մի հեռագրի նայելով Ռատօսլաւօֆ
և իւր կառավիրներէ չատերն ձեր-
բակալուած են, վտանգաւոր թղթեր
գտնուած լինելով երեսնց մօտ։

— Սօֆիայէն եկած պաշտօնական
տեղեկութիւններ կըհերքեն Բօպուր-
կի իշխանի դիտաւորութիւնը մայրա-
քաղաքէն մեկնելու մասին։

— Դուբը սեպտ. 7ին ծանուցա-
նելով Ռուսիայի իր առաջարկութեան
անյաջողութիւնը գօրավար Էրէնդո-
ւի պաշտօնի մասին, փափագ յայտ-
նած է իմանալ Ռուսիոյ տեսութիւն-
ներն այսհետեւ ընելիքին համար։
Դուբը միեւնոյն ատեն մի նոր չրջա-
բերական գրկած է պետութիւններին։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Սուէզի ջրանցի չեզոքացման հա-
մար ախտած բանակցութիւններն
անգլիական և ֆրանսական կառավա-
րութիւններին միջեւ՝ յուսալի է որ
շուտով աւարտին։ Արդէն համաձայ-
նութիւն գոյացած է որ ջրանցի չե-
զոքութեան պահպանութիւնը յանձ-
նուի միջազգային մի յանձնաժողովի
որ պարբերաբար պիտի գումարուի և
որի նախագահը պիտի լինի յանձնա-
ժողովի երիցագոյն անդամը։ Անգլիա
հրաժարած է նաեւ ջրանցի պահպա-
նութիւնը Թիւրքիոյն և իւր դաշ-
նակիցներուն վստահելու գաղափարէն։
Կը մնայ միայն որոշել թէ Ֆրանսա-
կան առաջարկութեան համեմատ,
բայց ջրանցի տիերը չեզոքացնելէ,
պէտք է նաեւ որոշակի մի տարա-
ծութեան վրայ արդիլել զօրքերն հա-
մալսարանը և ամրութեանց չինու-
թիւնը։

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱԶԴ

Հարկ կը համարինք ծանուցանել Արմենիայի բաժնորդ գրուիլ ցանկացողներին որ չուզելով ոեւէ ձեացորդ հաշիւ ունենալ մեր բաժնորդների հետ լրագրի Գ տարեշրջանին վերջ (1888 յուլիսի վերջ), այսուհետեւ տարեկան բաժնորդագրութիւն չենք կարող ընդունիլ Արմենիայի համար։

Ինչպէս գրուած է արդէն Արմենիայի ճակատը, բաժնորդագրութիւնները կը սկսին ամսագլուխներէն (Նոր Տարւոյ համեմատ)։ Ուստի անոնք որ կուզեն իրենց բաժնորդագրութեամբ պատուել և քաջալերել Արմենիան, իրենց սկսած ամսագլխէ մինչեւ 1888 Յունիսի վերջ ամէն մէկ եռամսեայի համար 3 ֆր. հաշուելով պէտք է դրկեն բաժնորդագինն. իսկ եթէ եռամսեաներէն դուրս մէկ կամ երկու ամիս ալ ձեայ մինչեւ 1888 Յունիսի վերջ, պէտք է 2 ֆր. հաշուել մէկ ամսի համար։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ԵՐԱՍԽ

Պատկերազարդ հանդէս

Պետերբուրգում ներկայ տարուայ Հոկտեմբեր և Նեկտեմբեր ամիսներում հրատարակուելի։

Ամեն մի գիրքը բաղկանալու է մօտաւորապէս 200 երեսից ոչ պակաս գիրքով։ Տպագրութիւնն, թուղթը և նկարները լինելու են շքեղ։ Բաժանորդագինն է 3 րուբլի։

ԵՐԱՍԽը լամբագրվում է գործին տեղեակ անձինքներից հետեւեալ ձեւերով.

Ամենակէտեական նշանակութիւն ունեցող հասարակական խնդիրներ. վէպիներ. վիպատանութիւններ. կենսագրական նիւթեր. ճանապարհորդութիւններ. տեղագրական, աշխարհագրական և ժողովրդական գրութիւններ. բանաստեղծութիւններ, թատրոնական գրուած քներ. կրիտիկա, մատենագրութիւն. գիտական յօդուածները դիւրամատչելի լեզուով ու իմաստով. թղթակցութիւններ, մանաւանդ օտարերկրեայ հայերի կեանքից. հայ և եւրոպական գրականութիւն ու նոյա ներկայացուցիչները. քաղաքական տեսութիւն. լրբագրոյց չուրջը. քրոնիկա. ազգային յիշատակարան. լուրեր. յայտարարութիւններ։

Հանդիսին մասնակցում են և օտարերկրեայ անուանի հայ գրագէտներ։

«Երասխ»ի վերաբերեալ ամենայն դրծերի մասին պէտք է դիմել Սիմէօն Դալամիրեանցին հետեւեալ հասցէով.

St. Pétersbourg. S. Goulamiriantz. Poste Restante.

COMITÉ DES CONCOURS POÉTIQUES
DU MIDI DE LA FRANCE

Anciens concours poétiques de Bordeaux

APPEL AUX POÈTES

Le trente-neuvième concours poétique ouvert en France le 15 Août 1887, sera clos le 1er Décembre 1887. Vingt médailles, or, argent, bronze seront décernées.

Demander le programme, qui est envoyé *franco*, à M. Evariste CARRANCE, président du Comité, 6, rue du Saumon, à Agen, Lot-et-Garonne. — Affranchir.

CONTES GRIVOIS

Par ÉVARISTE CARRANCE

Un petit volume in-18 ; prix **0,50** centimes.

Si vous voulez rire à vous tordre, achetez les CONTES GRIVOIS. Il y a dans ces pages légères une gaieté inextinguible, un parfum rabelaisien qui s'associe aux mets épicés qu'adoraient les disciples d'Epicure Il faut lire et relire : *La voix d'en haut Les grands pendards, La soupe du proviseur, Les baisers rendus* et *La tournée de Monseigneur.*

Adresser, pour recevoir le petit volume franco, 0,50 cent. à M. le Directeur de la *Revue Française*, à Agen.

BIBLIOGRAPHIE

L'AVENIR DE NOS ENFANTS, par Elysée Reclus. Prix franco : 10 centimes. En vente à la *Librairie des Deux-Mondes.* Paris, 17. rue de Loos, Xe arrondissement.

Cette page éloquente du grand penseur socialiste est une des plus belles qui aient été écrites contre l'asservissement dont l'enfance est victime.

L'humanité du lendemain dépend toujours de l'état dans lequel ont évolué les jeunes générations de la veille.

Conclusion de l'auteur : « Apprenons à les élever de manière à les développer dans la santé physique et morale la plus parfaite. » Nous voudrions voir cette intéressante brochure entre les mains de tous ceux de nos amis qui s'occupent des questions sociales en général et particulièrement des questions d'enseignement.

ԾԱԼՈՒԻ ԴԻՐՔԵՐ

Արմենիայի խմբագրատունը ծախու կը գտնուին հետեւեալ գիրքերն ամբողջ իրենց տակից նշանակուած գիներով կը դրկուին ուզողներին, փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։ Ստակը կանխիկ չվճարուած գիրք չդրկուիր։ Կարելի է ստակ դրկել մանտա-փոստով կամ ֆրանսական նամակադրոշմներով (timbres-poste)։ Նոյնպէս և ամերիկեան տոլար թղթադրամով (1 տոլարը 5 ֆրանգի հաշուով)։

1. ՐԱՖՖԻ—ԿԱՅԾԵՐ. Ա և Բ հատորներ.

Ազգային վիպագիր Պրն. Րաֆֆիի գործերին մէջ առաջին տեղը կը գրաւեն ԿԱՅԾԵՐը։ Ա.յս գիրքը կը ծանօթացնէ ընթերցողը տաճկական և պարսկական Հայաստանի դէմտուր տեղերին հետ, հետաքրքրական տեղեկութիւններ կուտայ քուրդերի գնացքն ցեղերի և հայերի դրութեան, վարքի և բարքի մասին։ Նա ցոյց կը տայ այն ծրագիրը որին պէտք է հետեւին Հայաստանի մէջ գործել ուզողներ։ Մի խօսքով, թէ՛ իբր ազգային ընտիր վիպատանութիւն և թէ՛ իբր հայրենասիրական գործունեութեան վարդապետարան և ծրագիր, արժան է որ գտնուի այս գիրքը ամեն հայրենասէր Հայի տունը։

Գինն Ա. հատորին 7 ֆր. Բ հատորին 8 ֆր. և 30 *սանթիմ*։ Երկու հատորներն միասին գնողին 15 ֆր.։

2. ՐԱՖՖԻ—ՓՈՒՆՋ. Ա և Բ հատորներ (Ա. հատորը կը պարունակէ Րաֆֆիի *սահմանուր* բանաստեղծութիւնները և Բ հատորն իւր գրած մի քանի վէպերն)։ Երկու հատորներն միասին 10 ֆր. և 50 *սանթիմ*։

4. ԳԱՄԱՌ-ՓԱԹԻՊԱ — ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ. (Ազգային առաջնակարգ բանաստեղծ Ռ. Պատկանեանցի ազատաշունչ և հրահանգիչ բանաստեղծութիւնները կը պարունակէ. սիրոյն գրուած է հեղինակին պատկերը)։ 2 ֆր.

5. ԳԱՄԱՌ-ՓԱԹԻՊԱ—ԱԶԱՏ ԵՐԳԵՐ. (Գամառ-Փաթիպան «բանաստեղծութիւններ»էն Ազատ երգերի մասը առանձին տետրակով տպագրուած), 20 *սանթիմ*։

6. ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ — ՎԱՆԴՈՑԾ. (Ամեն. Խրիմեան Սրբազանի գրած *սրտաշարժ*, խրատական և ազատասիրական տետրակը 1876ի Վանի հրդեհին նկատմամբ)։ 70 *սանթիմ*։

7. Գ. ԱՐՈՎԵԱՆՑ — ՀԱՅՈՑ ԱԶԳԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. (Ամեն Հայի համար անհրաժեշտ պարտք է իմանալ իւր ազգի պատմութիւնը, գիտենալ թէ ինչպէս սկսեր է իւր ազգ, ո՛րտեղ ունեցեր է իւր հայրենիք, ինչպէս եկեր հասեր է մեր օրերը, ո՛րտեղ եւ պատճառներ եւայլն։ Գէորգ Աբովեանց որ Տփղիսի Ներսիսեան վարժարանին մէջ Հայոց պատմութեան ուսուցիչ էր և որ յանկարծ մի օր, չգիտցուիր ինչ կերպով, անյայտացած է, իւր աւանդած դասերի համառօտութիւնը դրի վրայ առփոփած և թողած էր։ Ա.յդ «Համառօտութիւն Հայոց ազգի պատմութեան»ը որ մինչեւ այժմ երբեմն տպագրութեան արժանացած է, ի սկզբան կատար տեղեկութիւններ Հայաստանի հին աշխարհագրութեան վերաբերեալ և պատմութիւն ալ այնպիսի ոճով կանխ որ չներկայացնէր միայն Թագաւորների կռիւները, այլ և կը պատկերացնէ հայ ժողովրդի վիճակը)։ 2 ֆր.

8. ԳԱԲՐԻԷԼ ԵՊ. ԱՅՎԱԶԵԱՆ — ՆԻԿՈԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ (Պատմութիւն դարձեալ Հայկազանց Լեհաստանի թագաւորութիւն)։ 1 ֆրանգ

9. ԳԱԲՐԻԷԼ ԵՊ. ԱՅՎԱԶԵԱՆի գրած ԼՍԱՐԱՆ անուն հետաքրքրական տետրակներն որոնք հոգեշահ պատմութիւններ և օգտակար տեղեկութիւններ կուտան, կը ծախսուին իւրաքանչիւրը 35 *սանթիմ*

Ա. Պատմութիւն վարուց Մեծին Ներսէսի Հայրապետին մերոյ։

Բ. Եգիպտոսի հնութիւնները։

10. Ա. ՏԷՐ ՅԱԿՈԲԵԱՆ — ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ. (Պատկերազարդ հետաքրքրական աշխարհագրութեան). 2 ֆր.

11. ԵԶՆԻԿ ՔՀՆԱ. ԵՐԶՆԿԵԱՆՑ — ՁԱՅՆԱԴՐԵԼ, ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԱՐԱՆ Հայ դպրոցների համար (Աւրժ. Տ. Եզնիկ քահանան որ Հայկական Ձայնադրեալ երգարանի ուսուցիչ է Տփղիսի Ներսիսեան վարժարանին, 172 երեսներէ բաղկացած այս երգարանի մէջ ժողոված և հրատարակած է ազգային 104 երգեր, անոնց եղանակներն ալ Ձայնադրելով հայկական խազերով)։ 2 ֆր. 80 *սանթիմ*)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

Ա. ՀԱՅ ԴԻՒՅԱԶՆՈՒՀԻ ՄԸ (Եւրոպահ մէջ բնակած մի Հայի Հայաստանի վրայ արած խորհրդածութիւններով կը սկսի և մի Անգլիացու բերնով կը պատմէ երեւանցի մի հայ աղջկան հատատամուտութիւնը մահմետական կրօնը չընդունելու և իր հայ նշանածի հետ ամուսնանալ կամ (Աւրժ.), 50 *սանթիմ*.

Բ. ՀԱՅ ԳԻՒՂԱՅԻ (Հայ գիւղացիների բուն վիճակը որ չատերին անծանօթ մնացած է, ուսումնասիրելու պէտքը կը ներկայացնէ), 20 *սանթիմ*.

Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՅԵԼԻ (Հայաստանի ազատութեան ցանկացող մի Հայի մաղթանքներն և մտածումներն են Սաղմոսի ոճով գրուած), 40 *սանթ*.

ԼԵՒՈՆ ԼՈՒՍԻՆԵԱՆԻ ՊԱՏԿԵՐը

Կեղկեթի վերջին թագաւոր Լեւոն Լուսինեանի որ կը հանգչի Փարիզ ի Սէն-Ծրնի Կեղեսանինեանց վանքին մէջ, շիրմին պատկերը կը գտնուի «Արմենիա»ի խմբագրատունը։ Շիրմին վրայ կայ, տապանագիրէն զատ, և Լեւոն թագաւորի արձանը։

Պատկերի գինն է 60 *սանթիմ*։ Խմբագրութիւնն կը վճարէ փոստի ծախքը։

ՀԱՅԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ
ՕՏԱՐՆԵՐԻ ԱԶԲՈՒՄ

ՓՈՐՁի խմբագրապետ Մ.Եծ. Պրն. Սրգսր Ցամհանեսեանի կարդացած մի հրապարակական դասախօսութիւնն է Հայկական խնդրին նկատմամբ Թիֆլիսի Ժողովարանին մէջ 1879 թ. մայիսի 17ին։ Կը ներկայացնէ Եւրոպացիների նկատողութիւնները Հայերի մասին և կը նկարագրէ Լոնտոնի Անգլօ-Հայկական Մամանաժողովի արած միջնկը 1878 յուլիսին, Հայկական խնդրին համար։ Կը ծախսուի «Արմենիա»ի խմբագրատունն։ Գինն է 1 ֆր., փոստի ծախքը մեր վրայ։

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
Le Gérant : FÉLIX ENFFANTIN.

ՄԱՐՍԷՅԼ
Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանցի
Marseille. — Imprimerie du Midi, M. SCHICKLER rue Vacon 50.